ՈՒՂԵՑՈՒՅՑ

2020 թ.

Վանաձոր

2. ԶՈՐԱԿՈՉ

1. Զորակոչի ենթակա են՝

• 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 27 տարին լրանալը, իսկ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից՝ գիտության և կրթության բնագավառներում տարկետում ստացած քաղաքացիները՝ մինչև 28 տարին լրանալը
• բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցած ու պահեստազորի սպայական կազմ որակավորված արական սեռի քաղաքացիները (այդ թվում՝ բժիշկ-մասնագետները)՝ մինչև 35 տարին լրանալը (այսուհետ՝ պահեստազորի սպայական կազմ),
• այն քաղաքացիները և պահեստազորի սպայական կազմը, որոնց համապատասխանաբար 27 և (կամ) 35 տարին լրանում է տվյալ զորակոչի ընթացքում:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության **զորակոչը հայտարարվում է** ՀՀ կառավարության պտշմամբ՝ տարվա ընթացքում **ոչ պակաս, քան երկու անգամ:** Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ տարվա ընթացքում ոչ պակաս, քան մեկ անգամ:

3. Քաղաքացու ներկայությունը հայտարարված զորակոչին ապահովելու համար պատասխանատու է համապատասխան զինվորական կոմիսարիատը (դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը), որը պետք է իրականացվի քաղաքացուն **փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով** զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին ծանուցում ուղարկելու միջոցով:

4. Զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին **ծանուցում** ստանալու դեպքում Դուք **պարտավոր եք ներկայանալ զինվորական կոմիսարիատ:**

Ծանուցման մեջ նշվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու **իրավական հիմքը,** զինվորական կոմիսարիատ **ներկայանալու օրը, ժամը, վայրը և զինվորական կոմիսարիատը,** պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար զինվորական կոմիսարիատ չներկայանալու և զորակոչից խուսափելու հետևանքը, այլ տեղեկություններ:

Ուղեցույցը կազմեցին՝

Հայկ Հակոբյան
Արմինե Սադիկյան

Ուղեցույցը պատրաստվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդի (NED) ֆինանսական աջակցությամբ:
Սույն ուղեցույցում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են եւ հնարավոր է, որ չհամապատասխանեն Ժողովրդավարության աջակցության ազգային ֆոնդի (NED) տեսակետներին: